Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 116 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ ԵՎ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

## ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՋՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ

1. Սույն կարգով և պայմաններով կարգավորվում են փրկարարական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների ու ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծառայողների ընտանիքների անդամների ու փրկարարական ծառայության կենսաթոշակառուների (այսուհետ՝ փրկարարական ծառայողներ) հետազոտման, բուժման և այլ անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց տալու կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները:

2. Փրկարարական ծառայողներն անվճար բժշկական օգնություն են ստանում՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության բուժհաստատությունում՝ «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում.

2) պարտադիր պետական բժշկական ապահովագրության շրջանակներում.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման մասին» N 318-Ն որոշմամբ սահմանված դեպքերում.

4) օրենքով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բժշկական հաստատություններում:

3. Փրկարարական ծառայողների պարբերական ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտական հետազոտությունները և բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության բուժհաստատությունը.

2) Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող կամ ծառայող փրկարարական ծառայողների համար՝ նաև ծառայության վայրի տարածքային պոլիկլինիկական բժշկական հաստատությունները, առողջապահական պետական նպատակային ծրագրերի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

4. Փրկարարական ծառայողներին այլ բժշկական հաստատություններ, պոլիկլինիկական բժշկական հաստատություններ ուղեգրում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի լիազորած պաշտոնատար անձը՝ տալով ուղեգիր՝ 2 օրինակից: Ուղեգիրը տրվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

5. Փրկարարական ծառայողները բժշկական հաստատություններ ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտական հետազոտման ներկայանում են ուղեգրով: Ուղեգրի մեկ օրինակը որպես հիմք մնում է բժշկական հաստատությունում, մյուս օրինակը՝ հետազոտող բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով կնքված, վերադաձվում է ուղեգրող հիմնարկի ներկայացուցչին:

6. Շտապ բժշկական օգնության և սպասարկման ու անհետաձգելի վիճակների դեպքերում հիվանդ փրկարարական ծառայողների հոսպիտալացումը կազմակերպվում է մոտակա բժշկական հաստատությունում, որից հետո երկօրյա ժամկետում ձևակերպվում է ուղեգրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 116 - Ն որոշման

# Ո Ւ Ղ Ե Գ Ր Ի Ձ Ե Վ

## ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Փրկարարական ծառայողներին բժշկական հաստատություններ և պոլիկլինիկա-

կան բժշկական հաստատություններ ուղարկելու մասին ուղեգրի ձևն է՝

## Ո Ւ Ղ Ե Գ Ի Ր N_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(Դրոշմակնիք)

Ուղեգրվում է _____
(ստացիոնար բուժման, հետազոտման և այլն)
_____
(փրկարարական ծառայողի կոչումը, անունը, ազգանունը,
_____
հայրանունը, փրկարարական ծառայության կենսաթոշակառուն)
_____
(հայրը, մայրը, ամուսինը, երեխաները)
_____

_____ _____ 200__ թ.

Ախտորոշումը_____
_____
_____
_____
_____
_____:

_____
(Ուղեգրողի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ